ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1489 17.11.2014թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
Մուտք № 4649
18 11 2014 թ.

Հարգելի պարոն Գասպարյան.

Սույն թվականի հոկտեմբերի 17-ին Դիտորդական խումբը 2621/1473 գրությամբ դիմել էր Ձեզ ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՁՊՎ-ում արձանագրված որոշ մարմնական վնասվածքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար:

07.11.2014թ-ին թիվ 2/2-1-2872 գրությամբ ՀՀ Ոստիկանության կողմից Դիտորդական խմբին տրվել էր մեկնաբանություն, որտեղ կոչ էր արվում Դիտորդական խմբին, <<որ ՀՀ ոստիկանությանը անհիմն մեղադրանքներ ներկայացնելուց առաջ մանրակրկիտ ուսումնասիրվի առկա հանգամանքները, գրություններով ներակայացված հարցադրումները ճիշտ շարադրել, որից հետո նոր տալ գնահատականներ>>:

Դիտորդական խմբի կարծիքով այդ ամենը ապակողմնորոշման տեսակ է հաշվետվությունները ուսումնասիրողի համար, քանի որ Դիտորդական խումբը բոլոր անհրաժեշտ փաստերը ներկայացնելով իր գրության վեջին պարբերության և կից չորս կետերով ներկայացրել էր խնդիրը.

Մեջբերում՝ <<Այսպիսով՝ ուսումնասիրելով Դիտորդական խմբի կողմից կատարված մոնիթորինգի արդյունքները, երկու գերատեսչությունների կողմից տրված մեկնաբանությունները արձանագրվել է, որ

8844
18 11 14

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

1. Տվյալ ՀՊՎ-ում մարմնական վնասվածքներով ընդունված անձանց մարմնական վնասվածքները թաքցվում են և չեն գրանցվում:
2. Չեն համապատասխանում ձերբակալված, հաջորդիվ կալանավորված և ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ տեղափոխված անձանց քանակը:
3. Չեն համապատասխանում մարմնական վնասվածքներով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՀՊՎ ընդունված և հաջորդիվ ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ տեղափոխված անձանց մարմնական վնասվածքների քանակը:
4. Չեն համապատասխանում նույն մարդկանց մոտ տարբեր գերատեսչություններում արձանագրված մարմնական վնասվածքների տեսակները>>:

Պարզաբանում՝

1. Դիտորդական խումբը 2621/1473 գրությունը ներկայացրել է 17.10.2014թ-ին բայց առաջին կետին արդեն իսկ բավարար մեկնաբանություն էր տրվել 12 օր անց՝ 29.10.2014թ-ին:
2. Երկրորդ կետին տրված մեկնաբանությունը լիովին ընդունելի է Դիտորդական խմբի կողմից:
3. Երրորդ կետին տրվել է մասնակի մեկնաբանություն:
4. Չորրորդ կետին ընդհանրապես մեկնաբանություն չի տրվել:

Այսպիսով՝ խնդրում ենք Դիտորդական խմբին դիտողություններ անելու, ուղղություններ ցույց տալու փոխարեն, խնդրում ենք հանձնարարել, որպեսզի լիարժեք ուսումնասիրվի Դիտորդական խմբի հարցադրումները և պարզաբանվի բոլոր կետերն անխնդիր:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-3066 «25» 11 2014թ.

Ձեր 17.11.2014թ. թիվ 2621/1489 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Գրության 4-րդ պարբերության 3-րդ և 4-րդ կետերով նշված հանգամանքներին տրվում են հետևյալ մեկնաբանությունները.

ՁՊՎ ընդունվող անձանց մարմնի արտաքին զննության ժամանակ մարմնական վնասվածքներ հայտնաբերելիս ՁՊՎ վարչակազմը ղեկավարվելով ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 13-րդ կետի պահանջով անհապաղ հրավիրվում է շտապ օգնության խումբ: Հրավիրված շտապ օգնության բուժաշխատողի կողմից ցուցաբերվում է բուժօգնություն և իր իսկ կողմից <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ՝ նշելով մարմնի վնասված մասի անվանումը և վնասվածքների բնույթը:

Ինչ վերաբերվում է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնի ՁՊՎ-ում և ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ-ում նույն անձանց մոտ հայտնաբերված և արձանագրված մարմնական վնասվածքների քանակների ու տեսակների չհամնկնելուն, ապա այն հավանաբար կապված է տարբեր բուժաշխատողների մասնագիտական մոտեցումներից, որոնց վերաբերյալ ՀՀ ոստիկանությունը չի կարող տալ հստակ մեկնաբանություններ:

Հարկ է նշել, որ ՀՀ ոստիկանությունը հետևողական է ՁՊՎ ընդունված անձանց մոտ հայտնաբերված մարմնական վնասվածքները արձանագրելու և սահմանված կարգով վարույթն իրականացնող մարմիններին իրազեկելու գործում, ինչի վառ ապացույցն է այն, որ մարմնական վնասվածքներով ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ ընդունված անձանց քանակը եղել է ավելին, քան ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ ընդունվածներինը:

ՀՀ ոստիկանության շտաբ